

«ՍԱՍՆԱ ԾՈՒՐ» ՀԵՐՈՍԱՎԵՊԻ ՄՈԿԱՑ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ^{1*}

Բանալի բառեր² հերոսավեպ, տիպաբանական-տեղագրական, վիպասաց, լեզվական-բարբառային գրառող-հրատարակող, ճյուղ, ավանդական-ամբողջական, նախերգանք, բանավոր ավանդված, գրառված բնագիր:

Հերոսավեպի տիպաբանական խմբերը

«Սասնա ծռեր» ընդհանուր² անունով հայտնի հայ ժողովրդական հերոսավեպի (Էպոս) հայտնաբերումը, գրառումն ու հրատարակությունը սկսվում է 19-րդ դարի վերջին՝ 1873 թ., և շարունակվելով հասնում է 20-րդ դարի 70-ական թվականները:

«Սասնա ծռեր» հերոսավեպի բոլոր պատումները (տարբերակներ) գրի են առնվել տարբեր ազգագրականներից սերող վիպասացներից (վի-

^{1*} Ընդունվել է տպագրության 05.06. 2022 թ.

² «Սասնա ծռեր» ընդհանուր վերնագիրը կամ ժողովրդական վեպի անունը դրվել է պրոֆեսոր Մ. Աբեղյանի կողմից տակավին 1892 թվականին, այսմասին Մ. Աբեղյանը գրում է 1939թ. կազմված «Սասունցի Դավիթ» Հայ ժողովրդական Էպոս Բիբլիոգրաֆիա» պրակ առաջինում տեղ գտած «Մատենագրություն «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին» առաջաբանում: «Սասունցի Դավիթ» կամ Սիերի դուռ» և «Դավիթ և Սիեր» վերնագիրն ամբողջապես չի արտահայտում Վեպի բովանդակությունը, վորովհետև բացի Դավիթից և Սիերից Վեպի մեջ կան և ուրիշ գործող գլխավոր հերոսներ (Սանասար, Ասլի մելիք և ուրիշներ): Այդ ի նկատի ունենալով՝ մենք ավելի հարմար ենք գտնում այդ Վեպը մի ընդհանուր վերնագրով անվանել «Սասնա ծռեր», վոր նշանակում է «Սասունի Գժեր»: Այդ կոչումը գեղեցիկ և արտահայտիչ և միանգամայն ժողովրդական է, վորովհետև Սասնա Ծուռ և Վեպի մեջ գործող յուրաքանչյուր հերոսը, և մինչև այսօր էլ ժողովրդի բերանում գործածական է Սասնա Ծուռ կոչումը Վեպի ամեն մի հերոսի համար և ժողովուրդն այդ Վեպը «Սասնա Ծռեր» է անվանում: Սասնա Ծուռ կոչումը Վեպի հերոսների համար կա և Սրվանձտյանի վարիանտում: Միայն այսպես ժողովրդական վեպը կոչվում է «Սասնա ծռեր»: Տե՛ս «Սասունցի Դավիթ» Հայ ժողովրդական Էպոս Բիբլիոգրաֆիա, պրակ առաջին / կազմեցին Մ. Բաբայան յեվ Ս. Միքայելյան, ներածությամբ և խմբագրությամբ պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, Պետական Հրատարակչություն 1939, էջ XXXVI-XXXVII:

պող-պատմողներ, ավանդողներ, վիպասաց-բանասացներ)՝ «բերանից բառացի կամ գրեթե բառացի»¹։

Վիպասացները սերում են Արևմտյան Հայաստանից, մասնավորապես Վանա լճի ավազանն ու Նրանից հարավ-արևմուտքի և հյուսիս-արևելք ընկած գավառներից. Սասուն, Մուշ, Բաղեշ, Մոկս, Շատախ, Վան, Հայոց-ծոր, Խլաթ, Արճեշ, Մանազկերտ, Ալաշկերտ, Բայազետ²։ Հետագայում իրենց բուն հայրենիքից տեղահանվելով, ապաստանում են Արևելյան Հայաստան (Վաղարշապատ, Աշտարակ, Ապարան, Թալին, Նոր Բայազետ, Վեդի, Արտաշատ, Շիրակ, Լոռի), Պարսկահայք (Խոյ, Սալմաստ և Մակվա կողմեր), Թիֆլիս և այլուր, դառնալով գաղթական վերաբնակիչներ, և այս նոր վերաբնակված վայրերից էլ գրառվում են «Սասնա ծռեր» հերոսավեպի պատումների մեծ մասը։

Այսպես, հերոսավեպի բանավոր ավանդված պատումները կամ գրառված բնագրերը Նախնառաջ լեզվական-բարբառային (նաև վիպական ներքին այլ հատկանիշներ) հատկանիշով է, որ բաժանվում են տիպաբանական-տեղագրական երեք մեծ խմբերի³՝ Մշո, Մոկաց և Սասնա⁴։ Հերոսավեպի առաջին՝ Մշո, տարբերակին կցված առաջաբանում Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը՝ պատումի հայտնաբերողն ու գրառողը, մանրամասն անրադառնում է լեզվական-բարբառային առանձնահատկություններին։

Արդեն հերոսավեպի երկրորդ տարբերակը՝ հայտնաբերված և գրառված Մանուկ Աբեղյանի կողմից, Մոկաց բարբառով էր, և ուրեմն «Մեր Վեպը պատմվում էր ոչ միայն Մշո, այլ Մոկաց բարբառով»⁵։

Մ. Աբեղյանը մանրամասն ներկայացնում է նոր հայտնաբերված պատումի գրառման պատմությունը, այն համեմատում է Գ. Սրվանձտյանի պատումի հետ, առանձնացնում Մոկաց տարբերակի մի շարք կարևոր հատկանիշներ, որով ի հայտ է գալիս երկու տիպի պատումների՝ Մշո և Մոկաց, տարբերությունները։ Մ. Աբեղյանի այս երկու տարբերակների համեմատությամբ էլ, ըստ էության, հիմք է դրվում հերոսավեպի տիպաբանական-տեղագրական խմբերի առանձնացմանը և ուսումնասիրությանը։

1Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Ա, Երևան, 1966, էջ 325։

2Հայ վիպագիտության մեջ կա այն կարծիքը, որ Նախնական տիպն եղել է Սասնա պատումների խումբը, որի տարածումից ու տեղական վերամշակումներից առաջ են եկել Մոկաց և Մշո տիպաբանական խմբերը։ Տե՛ս, օրինակ, Հարությունյան Ս. Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, էջ 150։

3Այս երեք խմբերից բացի կան նաև խառն պատումներ, որոնց մեջ արտահայտված են այդ խմբերի տարբեր հատկանիշներ։

4Տիպաբանական-տեղագրական երեք մեծ խմբերը այստեղ թվարկում ենք ըստ հերոսավեպի տարբերակների հայտնաբերման հերթականության։

5Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Ա, Երևան, 1966, էջ 524։

Մ. Աբեղյանի կողմից կատարված հերոսավեպի այս երկու տիպերին լրացնելու են գալիս 1892 թ. Գարեգին սարկավագ Հովսեփյանի գրառած՝ հերոսավեպի չորս տարբերակներ (1 Մշո, 3 Մոկաց), և հերոսավեպի հետագա գրառումները:

Իր հերթին, Գարեգին սարկավագ Հովսեփյանն անրադառնում է ոչ միայն իր գրառած տարբերակների բարբառային առանձնահատկություններին, այլև պատումների տիպաբանական խմբերին. Գարեգին սարկավագ Հովսեփյանը առաջին անգամ նշում է, որ գոյություն ունեն նաև Սասնա պատումներ. «Մենք Սասունում երկար տարիներ ապրող մի մարդուց իմացանք Սասունի վեպի գոյությունը, բայց ափսոս անկախ պատճառներով չկարողացանք ամբողջությամբ գրի առնել¹», գրում է Գարեգին սարկավագը:

«Սասնա ծռեր» հերոսավեպի բուն հայրենիքի՝ Սասնա տիպաբանական խմբի պատումների առանձին ուսումնասիրություն են կատարել Ս. Հարությունյանն և Ա. Սահակյանը², որտեղ հեղինակներն առաջաբանում նախ պատմում են իրեց կողմից գրառված 17 նոր տարբերակների մասին, ապա և այս տարբերակները համեմատում են Սասնա նախկինում գրառված պատումների հետ, բացի այդ՝ հիմնավորվում է, որ Սասունն է «Սասնա ծռեր» հերոսավեպի բուն հայրենիքը:

Վիպագիտական գրականության մեջ հերոսավեպի տարբերակների այս հիմնական տեղագրական-տիպաբանական դասակարգումը, ամբողջանում է 1970-ական³ թվականներին՝ հերոսավեպի գրառման վերջին փուլից հետո, երբ բանագետ Ա. Ղանալանյանի ղեկավարությամբ և Ս. Հարությունյանի օգնությամբ սկսնակ բանագետ Ա. Սահակյանին հանձնարարվում է կատարել հերոսավեպի ողջ հավաքված տարբերակների քանակական և որակական ուսումնասիրություն⁴ (թեմայի առաջադրությունը՝ Ա. Ղանալանյանին է եղել):

Այս ուսումնասիրությանն էլ իր հերթին լրացնելու և ամբողջացնելու է գալիս բանագետ և գրականագետ Հ. Համբարձումյանի կողմից վերջերս կատարված հետազոտությունը⁵, որտեղ Հ. Համբարձումյանը մանրա-

1 «Սասնա ծռեր», «Սասունցի Դավիթ». Ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ (Աբարակի և Մոկաց բարբառներով), գրի առավ Գարեգին սարկավագը, Թիֆլիս, 1892, «Շարամածե» տպարան, էջ Ե:

2 «Սասնա ծռեր», հատոր Դ, գրառող և հրատարակող Ս. Հարությունյանն ու Ա. Սահակյանը, Երևան, 1999:

3 «Սասնա ծռեր» Ժողովրդական վեպի գրառման վերջնական փուլը 1970-ականներն են, քանի որ դրանից հետո այս խմբին պատկանող նոր տարբերակների գրառումներ գրեթե չեն եղել, կամ խիստ կցկտուր են եղել:

4 Ա. Սահակյան, «Սասնա ծռեր» պատումների քննական համեմատություն, Երևան, 1975, 190 էջ:

5 Հ. Համբարձումյան, Պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, 1918:

մասն համեմատում է հերոսավեպի բոլոր հրատարակված տարբերակները, անհրաժեշտ ճշգրտումներ կատարում, դասակարգում ըստ երեք տիպաբանական խմբերի, առանձնացնում նորանոր միջադեպեր:

Մոկաց պատումների գրառման և հրատարակման առաջին շրջանը

Մոկաց տիպաբանական խմբի գրառման պատմությունը սկսվում է հերոսավեպի առաջին տարբերակի հայտնաբերումից ու գրառումից¹ շուրջ տասներեք տարի անց՝ 1886-ին, և կապվում հայագետ, գրակա-նագետ, լեզվաբան, բառարանագիր, բանահավաք Մանուկ Աբեղյանի (1865-1944) հետ:

Այս երկրորդ տարբերակը, Մ. Աբեղյանը գրառում է Էջմիածնում՝ Մոկսի Գինեկանց գյուղացի Նախո քեռուց (Նահապետ) և հրատարակում Շուշիում 1889-ին «Դավիթ և Մհեր» վերնագրով: Երկրորդ պատումի հայտնաբերումով, ինչպես նշվեց, Նախ երևան է գալիս հերոսավեպի տիպաբանական տարբերությունը, որ մեր ժողովրդական վեպը պատմվել է ոչ միայն Մշո, այլ Մոկաց կողմերում և Մոկաց բարբառով:

Բացի բարբառային տարբերությունից Մոկաց պատումը Նախորդից տարբերվում էր կառուցվածքային և վիպական ներքին զանազան հատկանիշներով. այս տարբերակը սկսվում էր «Ողորմիջ» (օղորմի) երգային Նախերգանքով, երգային Նախերգանքի հետ միաժամանակ՝ «Այս Մոկաց պատումն ավելի բանաստեղծական է, մեջն ունի բավական թվով յերգեր, վոր վիպասան Նահապետը յերգում եր²», -գրում է Մ. Աբեղյանը: Ակնհայտ էր, որ այս երկրորդ տիպի պատումը գրեթե ամբողջապես նույն չափով էր հորինված, ինչպես վեպի մեջ եղած երգային հատվածները, Մ. Աբեղյանը պարզում է, որ այդ չափը հիմնականում ազատ ոտանավորի 6-13 վանկանի տողերով է (շատ քիչ անգամ 14 վանկ), ապա նաև համեմատում է հին վեպի բառացի մեջբերված հատվածների հետ, որ կան Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, և գտնում է, որ թե՛ հին և թե՛ նոր վեպերի չափը նույնն է³:

Մոկաց պատումի մեջ նորություն էին վիպական միջադեպերն, օրինակ՝ Դավթի մանկական արարքները, պատերազմի պատրաստությունը, Դավթի ձին՝ Զուռլիկ Զալալին, որն, ի դեպ, անձնավորված է ներկայացնում և ընդգրկված է վիպական գործողությունների մեջ, Մհերի ման-

¹Ժողովրդական վեպի առաջին տարբերակի հայտնաբերող ու հրատարակողն է բանագիտության հիմնադիր Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանը (1840-1892). 1873 թվին գրի է առնում ժողովրդական վեպի մի տարբերակ և 1874 թվին Կ. Պոլսում հրատարակում «Գրոց բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքուկում:

²Տե՛ս «Սասունցի Դավիթ» Հայ ժողովրդական եպոս Բիբլիոգրաֆիա, պրակ առաջին, էջ XXIV:

³Նույն տեղում էջ XXIV:

կույթունն և Միեդի ճյուղն ամբողջությամբ, Պարոն Աստղիկի կռիվը: Այս տարբերակում իր կատարած գործերով աչքի է ընկնում Ձենով Հովհանն, մինչդեռ Մշո պատումում Քեդի Թորոսը: Գրեթե բոլորովին նոր էին երկրորդական հերոսների կերպարները՝ Ձենով Հովհանի կին Սառյեն, Չմկիկ Սուլթանը, Պարոն Աստղիկը, Գոհար խաթունն ու ուրիշները:

Այս և շատ ուրիշ նորություններն ու տարբերություններն, անշուշտ, արժեքավոր էին դարձնում հերոսավեպը և հրավիրում ժամանակի մասնագետների ուշադրությունը, ինչն էլ իր հերթին բացում էր նորանոր խորագնա ուսումնասիրությունների (օրինակ՝ համեմատություններ հին ու նոր վեպերի հետև ալյն) հեռանկարներ: Մասնավանդ որ, ինչպես հերոսավեպի առաջին պատումին էր հայ բանագիտության հիմնադիր Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցը (1840-1892) կցել քննական առաջաբան, այնպես էլ Մ. Աբեդյանն է իր գրառած այս տարբերակին կցում է «Մի քանի խոսք» գիտական առաջաբան, իսկապես լրացնելով և խորացնելով առաջին պատումի արդեն դրված գիտական ավանդույթը, ինչը վկայում է, որ սկիզբ է դրվում ժողովրդական բանավեպի մասնավորապես ժողովրդական վեպի, լուրջ գիտական ուսումնասիրությունը մեզանում: Ավելին՝ հերոսավեպի հետագա բոլոր գրառումներին բանահավաքները խնամքով կցում են առաջաբան: Թե՛ առաջին պատումը և թե՛ Մոկաց քննվող այս տարբերակը արժանանում են ժամանակի գրախոսականների, գիտական քննությունների¹, ինչը դարձյալ, ըստ ավանդության, շարունակվում է հերոսավեպի հետագա բոլոր փուլերի հայտնաբերումների ժամանակ:

Երկրորդ շրջանը

«Սասնա ծռեր» հերոսավեպի Մոկաց տիպաբանական խմբի պատումների հայտնաբերումն ու գրառումը (միաժամանակ և հրատարակությունը²) կարելի է բաժանել երկու շրջանի՝ մինչև 1916 (15) թվական և դրանից հետո:

1 Երկրորդ պատումի հրատարակվելուց հետո՝ 1889-ին «Մուրճ» ամսագրում տպվում է մի ընդարձակ գրախոսական «Լ. Ս. (Լևոն Սարգսյան, «Մուրճ»-ի հետագա խմբագիրը) ստորագրությամբ:

Նույն 1889-ին «Նոր-Դար» լրագրի երեք համարներում (շարունակաբար) լույս է տեսնում Մ. Աբեդյանի անստորագիր մի ընդարձակ գրախոսություն Մոկաց այս տարբերակի մասին, որտեղ մանրամասն քննության է առնվում պատումի բովանդակային, կառուցվածքային հարցեր:

1889-ին Նիկողայոս Մառը «Ն. Մ.» ստորագրությամբ գրում է ընդարձակ գրախոսական:

2 Սկսած ժողովրդական վեպի անդրանիկ տարբերակից բոլոր հայտնաբերված և գրառված պատումները բանահավաքները ձեռնամուխ են եղել տպագրման, քիչ թվով պատումներ են, որ անտիպ են մնացել, հետագայում, դարձյալ հերոսավեպով հետաքրքրվող բանահավաքների ջանքերով հայտնաբերվել և տպագրվել են:

1886 (89)-1916 հայտնաբերված և հրատարակված պատումներ¹

Ս. Աբեղյանի գրառած տարբերակից հինգ տարի հետո՝ 1891-ին, Մուկաց երեք (երկուսը՝ ոչ ամբողջական) տարբերակ է գրի առնում տակավին սարկավագ Գարեգին Հովսեփյանը (1867-1952), հետագայում Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս, հայագետ և արվեստագետ։ Պատումները լույս են տեսնում Թիֆլիսում 1892-ին, «Ժողովրդական նյութեր» խորագրով գրքում։ պատումներից երկուսի գրառման վայրն ու վիպասացները չեն հիշատակվում, նշվում է միայն՝ «պատմեց մի մոկացի», երկրորդ տարբերակը՝ «պատմեց մի ուրիշ մոկացի»։ Երրորդ ամբողջական պատումը, Գ. Հովսեփյանը գրառում է մոկացի Հովհանից՝ «Դավիթ և Միեր» վերնագրով։

Մուկաց հաջորդ պատումը հայտնաբերում և գրառում է բանագետ, պատմաբան Բագրատ Խալաթյանցը (1860-1930/35) 1898-ին, որը 1899-ին «Սասնա փառիվաններ կամ Թըլոր Դավիթ և Միեր» վերնագրով և առանձին գրքուկով տպագրվում է Վաղարշապատում՝ Էջմիածնի տպարանում։

Նույն տարում 1899-ին, բանասեր, պատմաբան, մանկավարժ և հասարակական-քաղաքական գործիչ Արտաշես Աբեղյանը ((1878-1955))՝ Ս. Աբեղյանի եղբորորդին) Մուկաց Առինջ գյուղացի Հովակիմենց Ղազարից գրառում է «Թվատ Դավիթ և Միեր» պատումը։ Այս պատումը 1902-ին տպագրվում է Երվանդ Լալայանի (1864-1831) «Ազգագրական հանդես»-ի 2 գրքում (էջ՝ 159-192), ապա և Նույն հանդեսի է համարում (գրքում), 1901-ին, էջ՝ 103-112։

1901 թ. Էմիլյան ազգագրական ժողովածուի Բ հատորում լույս է տեսնում բանահավաք, ազգագրագետ Սարգիս Հայկունու (1832-1908) գրառած հերոսավեպի երկու նոր պատում։ «Սանասար և Բաղդասար» վերնագրով, պատմողն է՝ Մուկացի Սախուն։ Այս պատումին կից Ս. Հայկունին ունի ընդարձակ ծանոթագրություն, որտեղ մանրամասն պատմում է մուկացի գգարների մասին, որոնց միջոցով էլ տարածվել է հերոսավեպը։ Մյուս տարբերակի պատմողն է՝ մուկացի Վարդանը։

Հերոսավեպի մի նոր տարբերակ էլ Ս. Հայկունին գրառում է 1902-ին շատախցի Մկրտիչ Հարությունյանից։

1909 թ. «Արարատ» ամսագրի մայիս-հունիս, հուլիս-օգոստոս և սեպ-

¹ Այս թվականների ընթացքում գրառված և հրատարակված բոլոր պատումների վերահրատարակումը տե՛ս «Սասնա ծռեր» հ. Ա, Երևան, 1936, Պետական Հրատարակչություն։

տեմբեր համարներում լույս է տեսնում վեպի երեք նոր պատումներ. «Ձոջաց տուն» վերնագրով պատումը գրառում է Սարգիս Հայկունին՝ մոկացի Հաղին գյուղացի Թումաս Պետրոսյանից, մյուս տարբերակի գրառողն է բանահավաք Հարություն Ավչյանը՝ գավաշի Տեշոզ գյուղից եղիազար Հակոբյանից, և «Ձոջաց տուն կամ Սասնա ծռեր» վերնագրով երրորդ պատումն, որի գրառողն անհայտ է, պատմողն է Հայոց Ձորի Անկշտա գյուղացի Կազարյան Թառն¹: Հերոսավեպի այս երեք տարբերակները առանձին գրքով տպագրվում են բանասեր, պատմաբան, մանկավարժ Ստեփան Կանայանցի (1860-1936) խմբագրությամբ (Վաղարշապատ 1910):

1911-ին Մոկացի ուսուցիչ Հարություն Գիլանյանը(ծննդյան և մահվան թիվը անհայտ) գրառում է Նույն Մոկս ավանի Դաշտ թաղեցի Վարդան Մուխսի Բազիկյանից «Սասնա փահլեամներ» վերնագրով պատումը²:

Նույն՝ 1911 թվականին Ե. Լալայանի կողմից գրառվել է «Ոստանա տուն և Թյոլ Դավիթ» պատումը, ասացող՝ Հայոց-ձորի Քերծ գյուղից Մ. Սարգսյան, որը հրատարակվել է «Ազգագրական հանդես»-ի XXI գրքում³:

1915 թ. հայտնաբերվում և գրառվում են հերոսավեպի երեք նոր տարբերակներ, որոնք պահպանվել են Երվանդ Լալայանի արշավախմբի նյութերի մեջ ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտում: Հետագայում 1930-ականներին, երբ սկսվեց հերոսավեպի պատումների առանձին ժողովածուի գիտական հրատարակության (Ա հատորի) աշխատանքները, պատումները հանվեցին և ղեկավարվեցին ժողովածուում. «Դավիթ և Վհաբի կոիվը» պատումը Երևանում գրառում է շատախցի բանահավաք Շահեն Կուժիկյանը Մանուշակ Չադոյանից, «Սանասար և Բաղդասար» վերնագրով պատումը բանահավաք Արտաշես Բարսեղյանը գրառում է իր մորից Չարդար Տեր-Մխիթարյանից և «Սասնա ծռեր» պատումը գրառում է (1915/1916) բանասեր, մանկավարժ, բանահավաք Սենեքերիմ Տեր-Հակոբյանը (1881-1935) մոկացի Վարդան Մուխսի Բազիկյանից:

Հաջորդ՝ 1916 թվականին, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը գրառում է Մո-

1Այս տարբերակը Ստեփան Կանայանցն ստացել է Գյուտ քահանա Աղանյանից և վերը նշված երկու տարբերակների հետ տպագրել «Արարատ» ամսագրում: Մանրամասն տե՛ս «Սասնա ծռեր» Ա, էջ 1025 (առաջաբան ԻԴ պատումի):

2Նույն պատումը 1915-ին Նույն ասացողից որոշ հարասումով կրկին գրառել է բանահավաք Սենեքերիմ Տեր-Հակոբյանը:

3Ոստանա տուն և Թյոլ Դավիթ, ժողովրդական դիւցազնական վեպ /գրի առաւ Ե. Լալայան/, 1911, էջ

«Ազգագրական հանդես», գիրք XXI, էջ 101-126:

կաց 4 նոր տարբերակ. «Սասունցի Դավիթ»՝ շատախցի Հինեց գյուղացի Գրիգորից, «Թուլ Դավիթ և Միեր» վերնագրով տարբերակը գրառում է Էջմիածինում գավառից Մարգարիտ Սարգսյանից, գավառից Հարբերդ գյուղացի Գրիգոր Փոխան Եղիազարյանից է գրառում «Սասնա ծռեր» վերնագրով մի ուրիշ տարբերակ և Ագարակից (Աշտարակի շրջան) գրառում է «Սասնա ծռեր» վերնագրով մի տարբերակ ևս գավառից Բողնիս գյուղացի Համբարձում-Խապո Գրիգորյանից¹:

Առանձնակի ուշագրավ են բնաշխարհից գրառված տարբերակները²: Այդպիսի օրինակ է Մոկս ավանից 1911 թ. Հարություն Գիլանյանի գրառված Ժ պատումը՝ «Սասնա Փախկաններ» չորս ճյուղ ունեցող պատումը. վիպասացը Վարդան Մուխսի-Բազիկյանն է: Սենեքերիմ Տեր-Հակոբյանի 1916-ին գրառած ԻԳ պատումը. բանասաց Գավառի Բողնիս գյուղացի Համբարձում-Խապո Գրիգորյանից:

Այս տարբերակների շարքում բացառիկ նմուշ է Սարգիս Հայկունու «Սասնա ծռեր» վերնագրով ԺԳ պատումը³ Մուրադ Հովսեփյանից գրառված, որ գետեղված է ՍԾ, Բ հատորում: Մուրադ Հովսեփյանի հայրը՝ Մանասերը, Մոկաց Գոմանից գյուղից էր, Մուրադը ծնվում և ապրում է Արարատյան երկրում և համարվում Արարատի, սակայն վեպը նա սովորում է Բարսամ անունով մի աշուղից, վերջինս էլ սովորել էր Մուրադի հորից՝ Մոկացի Մանասերից: Ուշագրավ այս տարբերակի գրառման թվականն անհայտ է:

Հետագայում Մոկաց խմբի պատումների շարքի մեջ Հ. Համբարձումյանը տեղադրում է⁴ մի քանի Վանա ծագում ունեցող և Պարսկահայոց երկու պատումներ: Հետագոտողը այս տարբերակները կոչում է՝ «Մոկաց խմբի Վանից սերող պատումներ⁵», ինչը սակայն, ըստ հեղինակի, Վանը՝ որպես առանձին տիպաբանական խմբի հայրենիք առանձնացնելու հնարավորություն չի տալիս՝ անհրաժեշտ քանակությամբ պատումների բացակայության պատճառով: Հեղինակը պարզում է, որ «Վանից սերող

1 Բանահավաք Սենեքերիմ Տեր-Հակոբյանը պատումի ասացողի՝ Համբարձում-Խապո Գրիգորյանի կենսագրությունը կորցնում է, հետագայում 1933 թ. ԽՍՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի կողմից Աշտարակի շրջանը կազմակերպված գիտարշավի ընթացքում հարցումով գտնում են Համբարձումին և լրացնում են նաև բանասացի կենսագրությունը: Տե՛ս «Սասնա ծռեր» հ., Ա, 1936, էջ 981:

2 Ենթադրություններ կան (Տե՛ս ՍԾ, հ. Դ, Երևան, 1999, Ս. Հարությունյանի առաջաբանը էջ, 15), որ օրինակ Սարգիս Հայկունու գրառած մի քանի պատումներ՝ Ե, Ը, Թ, ևս բնաշխարհից են գրառված

3 Տե՛ս ՍԾ, հ. Բ, Երևան, 1951, էջ 231:

4 Հ. Համբարձումյան, Պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, 1918:

5 Մանրամասն տե՛ս Նույն տեղում, էջ 166:

պատումներում մոտիվները միջանկյալ դիրք են գրավում Մշո և Մոկաց խմբերի միջև և հավասարապես բնորոշ են երկու խմբերին էլ¹»:

Վանա պատումների այս խումբը կարելի է դիտարկել թե՛ Մոկաց պատումների մեջ, և թե՛ առանձին, սակայն շեշտելով հետազոտողի բնութագրումը՝ «Մոկաց խմբի Վանից սերող պատումներ», թերևս նույն սկզբունքը կարելի է կիրառել Պարսկահայոց երկու տարբերակների դեպքում: Բայց և այնպես, այս հոդվածի շրջանակում վերոհիշյալ պատումները չենք ընդգրկի Մոկաց մյուս պատումների հաշվի մեջ՝ նկատի ունենալով բուն Մոկսից սերող պատումների արդեն իսկ հսկայական ծավալը²:

Այսպիսով, մինչև 1916 թ. հայտնաբերվել և գրառվել էր «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի Մոկաց 23 նոր տարբերակներ:

Նորհրդային շրջանում գրառված և հրատարակված պատումներ

1916- ից հետո մինչև 1972 թվականը գրառվել և հրատարակվել է Մոկաց 9 նոր տարբերակներ. 1933-ին 4 պատում³, 1968-ին՝ 1 պատում, 1972-ին վեպի 4 տարբերակ:

1930-ական թվականներին «Սասնա ծռեր» հերոսավեպի հանդեպ հետաքրքրության վերընթացը գործնականորեն արգասավորվում է երկու ուղղություններով. հերոսավեպի տարբերակների (տպագիր և անտիպ) հրատարակումով և նորերի հայտնաբերումով և գրառումով: Այս առիթով ՀՄԽՀ Պետհրատի հանձնարարությամբ հերոսավեպի տպագիր ու անտիպ (1873-1946 թթ.) պատումները համախմբվում են գիտական երեք ծավալուն հատորյակների հրատարակության մեջ՝ Մ. Աբեղյանի խմբագրությամբ և Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատասիրությամբ, «Սասնա ծռեր», Ա, 1936, Բ, Ա մաս, 1944, Բ, Բ մաս, 1951: 1936-ի Ա հատորի մեջ ամփոփվում են «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի այն պատումները, որոնք գրառվել են Մոկացի, Շատախի, Սպարկերտի, Գավաշի ու Հայոց-ձորի վիպասաններից: Այս հինգ զավառները միմյանց սահմանակից լինելով, գտնվում են Վանա լճի հարավային կողմում, Արևելյան Տիգրիսի կամ Շատի հովտում և ունեն ընդհանուր լեզվական-բարբառային հատկանիշներ, հետևաբար «Սասնա ծռերի» առաջին ժողովածի մեջ զետեղվել են գլխավորապես Վանա բարբառով և ենթաբարբառներով վիպած պատումները (ինչպես նշվեց՝ Մոկաց, Շատախի, Նարեկի, Կաճետի, Սպարկերտի, Գավաշի, Հայոց-ձորի):

¹Նույն տեղում:

²Տե՛ս նույն տեղում ԺԸ և ԻԿ պատումները:

³Ժողովրդական վեպի այս երեք պատումների հրատարակությունը տե՛ս «Սասնա ծռեր» հ. Ա, 1936:

Ժողովածուն սկսվում է ընդարձակ ներածությամբ (ընդհանուր և ախաբան-նախաբան առաջին հատորի-բարբառային քերականական գիտելիքներ): Հատորի մեջ ամփոփված են վեպի 24 պատում, 4-ը՝ գրառված 1933-1934-ին (Կ. Մելիք Օհանջանյան և Ա. Ղանալանյան) ՀԽՍՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի կողմից 1933-ին կազմակերպված գիտարշավի ընթացքում: Այդ պատումներն էին (գրառող՝ Կ. Մելիք-Օհանջանյան)՝ 1933 թ. «Դավիթ և Միեր», գրառված Աշտարակում, բանասացն մոկացի Մանուկ Հարությունյան¹, «Սասնա Տավթի խեղիաթ», գրառված Վեդու շրջանի Շահաբլու գյուղից, բանասաց շատախցի Գրիգորից, «Դավթի կռիվը Մսրա Մելիքի հետ» գրառված Ագարակից (Աշտարակի շրջան)՝ շատախցի Հինենց գյուղացի Ազիզ Ղարիբյանից, և 1934 թ. Երևանում գրառված պատումը շատախցի Կաճետ գյուղացի Հովհան Չոհրաբյանից «Սասնա ծռեր» պատումը: Նույն՝ 1933-ին հայագետ, գրականագետ, բանահավաք Արամ Ղանալանյանը (1909-1983) Երևանում գրառում է Սպարկերտի Բազնից գյուղացի Փառիկից «Թյոլ Դավիթ» պատումը:

1934 թվականից հետո մինչև 1970-ականները, շուրջ 34 տարիներ, չի գրառվում վեպի ոչ մի նոր տարբերակ: 1968-1972 թվականներին գրառվում են վերջին 5 Մոկաց տարբերակներ:

1968-ին Արարատի շրջանի Ղուկասավան գյուղից Մոկաց մի նոր տարբերակ է հայտնաբերում և գրառում բանահավաք և բանագետ Գրիգոր Գրիգորյանը (1913-1994) և 1969-ին հրատարակում «Գարուն» ամսագրի №7 համարում², 1977-ին հրատարակում առանձին հատորում 1960-70-ական թթ. իր գրառված մյուս պատումների հետ³:

Մոկաց տարբերակների վերջին գրառումն ու հրատարակումը կատարվում է ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հատուկ նպատակային բանահավաքչական արշավախմբի կողմից⁴. արշավախմբի ղեկավարն էր հայագետ-արևելագետ, բանագետ, բանահավաք Սարգիս Հարությունյանը (1928-1919): 1971-1973 թթ. ընթացքում

12015-ին այս տարբերակը վերահրատարակվում է «Մոկա. Հայոց բանահյուսական մշակույթը» գրքում: Տե՛ս Հարությունյան (խմբ.) 2015, N 114, էջ 176-249:

2Տե՛ս Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական էպոսի նոր պատումը, «Գարուն», 1969, թիվ 7, էջ 2-14:

3Տե՛ս «Սասունցի Դավիթ», նոր պատումներ, հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Գ. և Վ. Գրիգորյանները, Երևան, 1977:

4Բանահավաքչական աշխատանքներին սեփական նախաձեռնությամբ մասնակցել են բանագետ-երաժշտագետ Արուսյակ Սահակյանը, գրող Չորայր Խալափյանը, պարագետ Ժենյա Խաչատրյանը, Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող Հ. Ամայանը և դոցենտ Լուսիկ Մելիք-Օհանջանյանը:

գրառված մեծ թվով պատումներից չորսը հենց Մոկաց (այդ թվում և Շատախի) տարբերակներ են: Այս պատումները գրառվել են 1972-ին. «Սասնա ծռեր» (Արարատի շրջան, Փոքր Վեդի), պատմել է Մոկսի Շափանց գյուղացի Մարտիրոս Մուրադյանը, «Սասնա ծռեր» (Արտաշատ, Քաղցրաշեն գյուղ) վիպասացն է շատախցի Մարթա Փիրումյանը, «Սասնա ծռեր» (Մասիս ավան) վիպասացն է Մոկսի Տմիս (Տմիք) գյուղացի Թովմաս Սարգսյանը, «Սասնա Տավթի խեքիաթը» (Արարատ, Շաղափ գյուղ), վիպասացն է Ռաշո Մուրադյանը Շատախի Կաճետ գյուղից¹: Հերոսավեպի այս պատումների հայտնաբերումն ու գրառումը փաստորեն լրումն էր վիպահավաքման շարունակվող ավանդների, մասնավորապես որ հայտնաբերված և գրառված պատումները ամփոփվեցին Նախորդ հատորների գրեթե Նույն սկզբունքներով կազմված² հաջորդ՝ Գ հատորում, 1979թ.՝ Ա. Ղանալանյանի խմբագրությամբ. պատումների գրառումները և բնագրի պատրաստումը՝ Ս. Հարությունյանի, Ա. Սահակյանի աշխատասիրությամբ:

Անկախության շրջանում գրառված³ և հրատարակված պատումներ չկան:

Այսպիսով, մինչ օրս «Սասնա ծռեր» հերոսավեպի Մոկաց տիպաբանական խմբի մեզ հայտնի պատումների քանակը հասնում է 32-ի, որոնք տպագրվել են տարբեր տարիներին տարբեր ժողովածուներում, ապա հետագայում ամբողջացել գիտական վերը նշված ժողովածուներում. «Սասնա ծռեր» հ. Ա, 1936, «Սասունցի Դավիթ» 1968, «Սասնա ծռեր» հ. Գ, 1979:

1 Ռաշո Մուրադյանից պատումը առաջին անգամ 1933-ին գրառում է Կ. Մելիք-Օհանջանյանը և տպագրում «Սասնա ծռեր» Ա հատորում՝ 28 պատում: 50 տարի հետո Նույն վիպասացից երկրորդ անգամ գրառում է Ս. Հարությունյանը: Պատումը ուշագրավ է հատկապես Նրանով, որ հավելվում են առաջին և չորրորդ ճյուղերը. Առաջին գրանցման մեջ ընդգրկված է երկրորդ (Մեծ Մհեր) և երրորդ (Դավթ) ճյուղերը, փաստորեն երկրորդ գրառումը մի կողմից պահպանում է պատումի ավանդականությունը, մյուս կողմից, բարեբախտաբար ավելանում է պատումի ծավալային ամբողջությունը: Տե՛ս Նույն տեղը, էջ 128:

2 «Սասնա ծռերի» Գ հատորի մեջ գրեթե պահպանվել է Նախորդ հրատարակության բնագրագիտական սկզբունքները, մասնակի շեղումով. Ա և Բ հատորներում կիրառված վիպական մեծ և փոքր միջադեպերի վերնագրման սկզբունքը չի պահպանված, նկատի ունենալով, որ այն մասնատում է պատումի ընդհանուր նկարագիրը՝ ինչ-որ չափով խախտելով պատումի միասնական ուղիղը: Տե՛ս «Սասնա ծռեր» հատ., Գ, 1979, էջ 5:

3 Ավանի ամենակին չի բացառում մեզ համար անհայտ գրառված և հայտնաբերված Նոր տարբերակների գոյությունը, որոնք կարող են գտնվել բանահավաքների անձնական արխիվներում, սակայն հրատարակումներ մինչև օրս չկան:

Պատումների քանակական և որակական հատկանիշները

Նախ ի մի ներկայացնենք այս պատումների քանակական հատկանիշները:

Վիպագիտության մեջ «Սասնա ծռեր» հերոսավեպի դասական կառուցվածքը համարվում է չորս ճյուղը (հերոսների սերունդների հաջորդականությունը)¹, սա արդեն հայտնի է՝ «մեկ հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ պատումներով և ապացուցված գիտական հետազոտություններով²»:

Հայտնի է նաև, որ հերոսավեպի ճյուղերի քանակը կարող է տատանվել մեկից չորսի միջև³, ինչը ևս օրինաչափ է Մոկաց խմբի պատումների համար:

Մոկաց խմբի մինչև այժմ հայտնի վերը բերված 32 պատումներն, ըստ ճյուղերի քանակի, հետևյալ պատկերն ունեն. բուն Մոկացի և Նրա հարակից թաղերից, և գյուղերից ու գյուղաքաղաքներից հայտնի է 15 պատում: Այս տարբերակներից Մոկաց առաջին պատումը երկճյուղ է⁴, չորս պատումներ մեկ ճյուղ ունեն⁵, եռաճյուղ են այս խմբի յոթը պատում⁶, քառաճյուղ՝ երեքը⁷: Մոկաց պատումների յուրահատկություններից մեկն

1 Հերոսավեպում ճյուղերից յուրաքանչյուրը մի առանձին վեպ է՝ հերոսներից յուրաքանչյուրի սերունդի մասին. ճյուղերը միմյանց հարակցվում են ըստ հոր և որդու հաջորդականության: Դրանց միացությունը կարող է լինել ինչպես ներքին հարաբերակցության հիման վրա, այնպես էլ առանց այդ հարաբերակցության կամ ներքին միասնության:

2 Տե՛ս «Սասնա ծռեր» հատ., Գ, Երևան, 1972, էջ 12:

3 Թե՛ն վիպասացները Նշում են յոթ ճյուղի մասին, բայց գրառված ոչ մի պատում յոթ ճյուղ չունի:

4 Տե՛ս «Սասնա ծռեր» (հետայսու՝ ՍԾ) հ., Ա, Ա պատում (Մոկաց Գինեկաց գյուղացի Նախո Թեռի):

5 Տե՛ս ՍԾ, հ. Ա, Գ պատում (Մի Մոկացի), ՍԾ, հ., Ա, Դ պատում (Մի ուրիշ Մոկացի), ՍԾ, հ. Ա, Ե պատում (Մոկացի Առինջ գյուղացի Սախո), ՍԾ, Նոր պատումներ. հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Գրիգոր և Վահան Գրիգորյանները, մեկ Մոկաց պատում վիպասաց՝ Մոկացի Կակո բիծա: Այս պատումներից երկուսը՝ ՍԾ, հ. Ա, Գ պատում և ՍԾ, հ. Ա, Դ պատում, ոչ լիար=eq տարբերակներ են:

6 ՍԾ, հ. Ա, Բ պատում (Մոկաց Գինեկաց գյուղացի Խապոյենց Չատիկ), ՍԾ, հ. Ա, Ե պատում (Մոկացի Հովհան), ՍԾ, հ. Ա 2 պատում (Մոկացի Առինջ գյուղացի Հովակիմենց Ղազար), ՍԾ, հ. Ա, Ը պատում (Մոկացի Վարդան), ՍԾ, հ. Ա, Թ (Մոկաց Հաղին գյուղացի Թումաս Պետրոսյան), ՍԾ հ. Գ, Ա պատում (Մոկացի Մարտիրոս Մուրադյան), ՍԾ, հ. Գ, Բ պատում (Մոկսի Տմիս (Տմիք) գյուղաքաղաքից Թովմաս Սարգսյան):

7 ՍԾ, հ. Ա, Ժ պատում (Մոկս ավանից Վարդան Մուխսի-Բագիկյան), ՍԾ, հ. Ա, ԺԱ պատում (Մոկացի Վարդան Մուխսի Բագիկյան), ՍԾ, հ. Ա, ԺԲ պատում (Մոկս ավանից Մանուկ Հարությունյան):

Էլ այն է, որ առանձին տարբերակներ գրառվել են բնաշխարհում¹՝ Մոկսում (Ժ պատում, մի քանի տարբերակներ Ս. Հայկունու գրառումներից):

Մոկաց խմբի պատումների մի մասն էլ այս ենթախմբին հարող Շատախի պատումներն են՝ թվով յոթ պատում. երեքը՝ եռաճյուղ է², իսկ չորսը՝ երկճյուղ³:

Հաջորդ խումբը, Մոկաց բնաշխարհին հարող հաջորդ՝ Գավաշի և Նրա հարակից գյուղերի պատումներն են: Վեց պատում էլ հայտնի է այս շրջանից. որոնցից մեկը ունի մեկ ճյուղ⁴, երկուսը եռաճյուղ են⁵, երեքը՝ քառաճյուղ⁶: Հաջորդը՝ Սպարկերտի պատումը, երկճյուղ է⁷: Եվ Մոկսին հարող Հայոց-ծորի հայտնի մեկ պատում քառաճյուղ է⁸:

Համադրության ու համեմատության արդյունքում վիպագիտության մեջ արդեն հաստատված է այս պատումների ավանդական լինելը, քանի որ գերակշռող են ամբողջական քառաճյուղ տարբերակները, տարածված են ինչպես երկճյուղ, այնպես էլ եռաճյուղ տարբերակներ, վերջինս յուրահատուկ է թե՛ Մշո և թե՛ Սասնա պատումներին:

Սակայն, «Սանասար և Բաղդասար» առաջին ճյուղը առանձին տեսքով հանդես է գալիս Ե Մոկաց տարբերակներում: Այս տարբերակներն օժտված են Ողորմիքի (Օղորմիներ) ինքնատիպ նախերգանքներով, որը գրեթե բացակայում է Մշո և Սասնա պատումներում:

Այսպես, տեսնում ենք, որ «Սասնա ծռեր» հերոսավեպի տիպաբանական այս խմբի պատումները ավանդական-ամբողջական են՝ քառաճյուղ: Այս տարբերակների համեմատության և հետազոտության մեջ կան և հավելյալ փաստեր, որ հետաքրքրական եզրահանգման են բերում հոգուտ այս խմբի պատումների ավանդական լինելուն: Մոկացի Տիգրան

1Բնաշխարհից գրառված առանձին նմուշներ հանդիպում են Մշո տարբերակներում, իսկ Սասնա պատումները բացառապես գրանցված են Արևելյան Հայաստան վերաբնակված սասունցիներից:

2Տե՛ս ՍԾ, հ. Ա, ԺԳ պատում (Շատախի Ավետի Մեզրե գյուղից Սկրտիչ Հարությունյան), ՍԾ, հ. Գ, պատում Գ(Շատախի Հառոսկի գյուղացի Մարթա Փիրումյան), ՍԾ, հ. Գ, պատում Դ ((կրկնակի գրառում) Շատախի Կաճետ գյուղից Ռաշո Մուրադյան):

3Տե՛ս ՍԾ, հ. Ա, ԺԴ պատում (Շատախի Հինենց գյուղից Մանուշակ Չաղոյան), ՍԾ, հ. Ա, ԺԵ պատում (Շատախի Հինենց գյուղացի Գրիգոր), ՍԾ, հ. Ա, ԺԶ պատում (Շատախի Կաճետ գյուղից Ռաշո Մուրադյան և Շատախի Հինենց գյուղից Ավո Չաղոյան), ՍԾ, հ. Ա, ԺԷ պատում (Շատախի Հինենց գյուղից Ազիզ Դարիբյան):

4ՍԾ, հ. Ա, Ի պատում (Գավաշի Նարեկ գյուղացի Չարդար Տեր-Մխիթարյան):

5ՍԾ, հ. Ա, ԻԱ պատում (Գավաշից Մարգարիտ Սարգսյան), ՍԾ, հ. Ա, ԻԲ պատում (Գավաշի Հարբերդ գյուղից Գրիգոր Փոխան Եղիազարյան), ՍԾ, հ. Ա:

6ՍԾ, հ. Ա, ԺԹ պատում (Գավաշի Տեշոլ գյուղացի Եղիազար Հակոբյան), ՍԾ, հ. Ա, ԻԳ պատում (Գավաշի Բողկիս գյուղից Համբարձում-Խապո Գրիգորյան):

7ՍԾ, հ. Ա, ԺԸ պատում (Սպարկերտի Բազինց գյուղացի Փառիկ):

8ՍԾ, հ. Ա, ԻԴ պատում (Հայոց-ծորի Անկշտան գյուղից Թառո Կազարյան):

Մուրադյանի հավաստմամբ¹ ինքը վեպը սովորել է Նախո Զեռուց. Նախո Զեռին միայն երկու ճյուղ է պատմել՝ Դավիթ և Միեր: Տիգրան Մուրադյանի պատումը քառաճյուղ է. մի վկայություն բանասացի կողմից, թե Նախոն իմացել է վեպի չորսը ճյուղը, փոխում է ողջ պատկերացումը հերոսավեպի ճյուղերի քանակի մասին: Սակայն սա եզակի փաստ չէ. շատախցի Ռաշո Զալոյանի պատումը առաջին անգամ գրառվում է 1933-ին Կ.Մե-լիք-Օհանջանյանի կողմից, Ռաշոյից Նույն պատումը հաջողվում է գրառել շուրջ քառասուն տարի անց՝ երկրորդ անգամ 1972-ին Սարգիս Հարությունյանի կողմից: Առաջին գրառումը ուներ միայն երկրորդ (Մեծ Միեր) և երրորդ (Դավիթ) ճյուղերը, իսկ երկրորդ գրառումը Նույնի գրեթե բառացի վերարտադրությունն է, ավելացված նաև առաջին և չորրորդ ճյուղերը:

Այս երկու տարբեր ժամանակներում գրառված պատումի մասին Ս. Հարությունյանը գրում է. «Փաստորեն երկրորդ գրանցումը մի կողմից ապացուցում է պատումի ավանդականությունը և, մյուս կողմից, փոխում Ռաշոյի պատումի ծավալային տեսքի մասին մինչև այժմ եղած պատկերացումները²»:

Բացի սրանից, գրեթե բոլոր բանասացները (բանահավաքների հարցումի դեպքում և առհասարակ) վկայում են, որ գիտեին հերոսավեպի ամբողջական տարբերակը, սակայն մոռացել են, և կամ իրենց վարպետը ավելի ընդարձակ էր պատմում, իրենք են մոռացել: Փոյթ չէ, որ այսպիսի վկայությունները կարող են հասնել անգամ չափազանցության³. ինչպես Գրիգոր Փոխան Եղիազարյանի հաղորդումն է, թե՛ «Դավթի խեքաթը» լսել է համագյուղացի Չաքոյից՝ «Չաքոն չուր ի լուս կը պատմեր⁴: Մեկ ուրիշ վիպասաց՝ Մոկացի Հովակիմենց Ղազարը, պատմում է, որ իր վարպետը գիտեր վեպի յոթ ճյուղը:

Այս և նման փաստերը պատկերացում են տալիս հերոսավեպի նախնական տեսքի մասին, ապա և նման օրինակների գոյությունը հուշում է ավանդական տարբերակի հետ ունեցած կապի մասին, որ մթագնել է կամ թուլացել թե՛ ժամանակի և թե՛ հերոսավեպի (բանասացի) բուն հայրենիքից տեղաշարժի պատճառով:

Վերադառնալով այս պատումների որակական հատկանիշների արժևորումներին՝ պետք է նշել, որ պատումներն ունեն բանահյուսական տարբեր որակ, քանի որ տարբեր են վիպասացների շնորհներն ու ընկալումները, հիշողությունը, հերոսավեպի նկատմամբ ունեցած ավանդա-

1Տե՛ս ՍԾ, հ., Գ, էջ 14;

2Տե՛ս ՍԾ, հ. Գ, պատում Դ-ի առաջաբանը էջ 128:

3Ինչը կարծում ենք բանավոր խոսքին բնորոշ երևույթ է՝ գուցե միտված վարպետին իդեալականացնելու նպատակին:

4Տե՛ս ՍԾ, հ. Ա, ԻԳ պատում էջ 939:

կան վերաբերմունքի աստիճանը: Ուշագրավ է և խիստ բնութագրական, որ այս տարբերակների վաղ գրառումները զուրկ են գրքային ազդեցություններից:

Այս խմբի պատումները աչքի են ընկնում վիպական բացահայտ ավանդականությամբ՝ այսինքն, ավանդական ոճով, բանաձևած հակիրճ պատկերավոր խոսքով, ազատ ոտանավորի տաղաչափական հատկանիշով, չափածո-երգային հատվածների առկայությամբ և առատությամբ (Ողորմիքի ինքնատիպ երգային հատվածներով), ինչը թույլ է տալիս Մոկաց խմբի պատումները (չնչին բացառություններով հանդերձ) որակել ավանդական-պատմողական, արձակ և չափածո հատվածներով հատկանշվող տիպի մեջ:

Եզրահանգումներ

ա) «Սասնա ծռեր» հերոսավեպի երկրորդ տարբերակի հայտնաբերումն ու գրառումը ևս մի նոր հայտնություն էր սաղմնավորվող հայ բանագիտության համար:

Նախ՝ Գարեգին վարդապետի՝ հերոսավեպի առաջին տարբերակի հայտնաբերումից և գրառումից հետո ամբողջ տասներեք տարի ոչ մի պատում երևան չի գալիս: Երկրորդ՝ հերոսավեպի առաջին գտնված պատումը Մշո կողմերից էր, իսկ երկրորդ պատումը՝ մեկ այլ գավառից՝ Մոկսից:¹ Հետևաբար ակնհայտորեն երևում է, որ հերոսավեպը պատմվել էր ոչ միայն Մշո բարբառով և Մուշում, այլ նաև Մոկացիների մեջ և Մոկաց բարբառով: Ինչը ժամանակի մտավորականների, ովքեր գիտեին ժողովրդական բանահյուսության արժեքը, մեջ մեծ հետաքրքրություն առաջացնում² և մղում հերոսավեպի հայտնաբերման և գրառման լուրջ ջանքերի³: Այդ մտավորականներն էին Գարեգին վարդապետ Սրվանձտ-

1 Այդ են վկայում մանավանդ Մ. Աբեղյանի կողմից երկրորդ պատումի հրատարակումից հետո բազմաթիվ գրախոսականներն ու գովասանական գնահատականները. Լեո, «Մուրճի» խմբագիր Ավետիք Արասիանյանը, Գր. Խալաթյանը, «Մեղու»-ի գրախոս Գևորգ Տեր Աղեքսանդրյանը, պրոֆեսոր Զ. Պատկանյանը, Սեդրակ Մանդինյանը և այլք: 1880-ական թվականների առաջին կեսին հերոսավեպը դառնում է նաև բարձրագույն դպրոցական դասավանդման նյութ: Այդ ժամանակի Էջմիածնի ճեմարանի հայոց գրականության ուսուչիչը՝ Կարապետ Կոստանյանը, լսարանում դասավանդում է նաև ժողովրդական բանահյուսություն, ավելի մանրամասն կանգառնելով մեր հերոսավեպի վրա: Այս մասին տե՛ս «Սասունցի Դավիթ» Հայ ժողովրդական եպոս Բիբլիոգրաֆիա, պրակ առաջին / կազմեցին Մ. Բաբայան յեվ Ս. Միքայելյան, ներածությամբ և խմբագրությամբ պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, Պետական Հրատարակչություն 1939, էջ XXIII

2 Թևեպետ չկային բանահավաքչական գործը կազմակերպող ո՛չ կառույցներ, և ո՛չ էլ նյութական ապահովության կառույցներ, բայց բանահավաքչությունը կատարվում էր անհատական նախաձեռնությամբ

յանքը, Մանուկ Աբեղյանը, Գարեգին սարկավագ Հովսեփյանը, Բագրատ Խալաթյանը, Արտաշես Աբեղյանը, Սարգիս Հայկունին:

բ) Միևնույն ժամանակ տեղագրական (բնականաբար նաև լեզվական-բարբառային) Մուշ (առաջին պատում)/Մոկս (երկրորդ տարբերակ) տարբերությունը առիթ է դառնում հերոսավեպի խմբավորման, որ և գալիքում, Նորանոր պատումների հայտնաբերումով, պետք է ավելի ընդգրկուն տեսք ստանար և հասնելով հերոսավեպի գրառման վերջին փուլին՝ 70-ականներին, վիպագետների կողմից միավորվեր երեք մեծ՝ Մշո, Մոկաց և Սասնա, տեղագրական-տիպաբանական խմբերի մեջ:

գ) Մոկաց երկրորդ տարբերակի հայտնաբերումով և գրառումով սկսվում է մի մեծ գործընթաց, որն ուղղված էր ոչ միայն (և մանավանդ) հերոսավեպի Նորանոր տարբերակների, այլ նաև՝ առհասարակ ժողովրդական հարուստ ավանդույթի որոնմանը և գրի առնելուն: Բանասացների (այդ ավանդույթները կրողների ու բանավոր կերպով փոխանցողների) դերը դառնում է խիստ կարևոր և անհրաժեշտ այդ ավանդույթները փոխանցելու գործում: Այս պատճառով միաժամանակ սկսվում է այդ մարդկանց կենսագրական տվյալների հավաքման¹ գործ:

դ) Մոկաց պատումների գրառումների ժամանակային փուլերը երեք են՝ 1889-1900-ական թվականներ, 30-ական և 70-ական թվականներ, այսինքն՝ տասներեք, տասնյոթ և երեսունչորս տարի ընդմիջումներով, որը բնականաբար իր ազդեցությունն ուներ վեպի բանավոր գոյատևման վրա: Սրանով հանդերձ, Նորանոր գրառումները կարևոր արժեք են ստանում, հարստացնում են վեպի բովանդակությունն ու կառուցվածքը. հին միջադեպերի, մոտիվների հավելյալ հարասումներով ստեղծում մի արժեքավոր, ամբողջական և միասնական հերոսական պատմություն:

«Սասնա ծռեր» հերոսավեպի Մոկաց տիպաբանական խմբի մեզ հայտնի պատումների քանակը հասնում է 32-ի:

ե) Այս տարբերակները ունեն իրենց յուրահատուկ քանակական հատկանիշները, որով տարբերվում են Մշո և Սասնա խմբի պատումներից: Նախ վերջիններս համարվում են ամբողջական-ավանդական՝ քառաճյուղ, հանդես են գալիս նաև երկճյուղ և եռաճյուղ տարբերակներով: Բնորոշ հատկանիշներից է առաջին ճյուղի՝ «Սասնասար և Բաղդասար», մյուս ճյուղից առանձին առկայությունը և Ողորմիք Նախերգանքները:

զ) Որակական հատկանիշներից ամենակարևորը Մոկաց պատում-

1 Թեպետ վերջինս մեծ ուշադրության են արժանացել բանահավաքները, (որը Գարեգին վարդապետից եկող ավանդույթ էր դարձել), բայց այն հայ բանագիտության մեջ տակավին կարոտ է լուրջ ուսումնասիրության:

ների բացահայտ ավանդական հատկանիշներով օժտվածությունն է. ավանդական ոճ՝ այսինքն, բանաձևաձև հակիրճ պատկերավոր խոսք, ազատ ոտանավորի տաղաչափական հատկանիշներ, չափածո-երգային հատվածների առկայություն:

Ուշագրավ մի հանգամանք է. «Սասնա ծռեր» հերոսավեպի Մոկաց մինչև այժմ հայտնի պատումների որոշ տարբերակներ ժամանակին գրառվել են բնաշխարհում: Այս պատումների վիպասացները հերոսավեպի նկատմամբ ունեցել են խիստ ավանդական վերաբերմունք, հաճախ առանձին հատվածներ երգելով են ասել: Եվ ամենակարևորը, այս խմբի գրեթե բոլոր տարբերակները զուրկ են գրքային ազդեցությունից:

Ուրեմն, որականական այս հատկանիշների առկայությամբ է, որ Մոկաց խմբի պատումները վիպագիտության մեջ որակվել են իբրև ավանդական-պատմողական, արձակ և չափածո հատվածներով հատկանշվող հերոսավեպի ավանդական տիպ:

ANNA POGHOSYAN - HISTORY OF RECORDING AND PUBLICATION OF NARRATIONS OF MOKQ OF THE HEROIC EPOS “SASNA TSRRER” - Armenian folk heroic epos “SasnaTsrer” was discovered and recorded in course of the 19-20 centuries. It was recorded in the Western Armenia, in particular, according to oral information provided by storytellers living in the basin of Lake Van, as well as provinces located to the south-west and north-east of it: Sasun, Mush, Baghesh, Moks, Shatakh, Van, Hayotsdzor, Khlata, Archesh, Manazkert, Alashkert, Bayazet. They were uneducated, pious countrymen, who were forcefully resettled from their homeland during the Genocide of Armenians and found their shelter in the Western Armenia (Vagharshapat, Ashtarak, Aparan, Talin, Nor Bayazet, Vedi, Artashat, Shirak, Lori), Parskahayk (Khoy, Salmast, Maku), Tiflis, etc. becoming migrant settlers. So, most of the stories of the “SasnaTsrer” heroic novel were recorded in these new settlements.

The heroic epos was transmitted orally in the various dialects and subdialects. That is the reason why the following records were united into three typological-toponymical groups (Mush, Mokq and Sasun).

And even though this typological-toponymical classification were made after the last stage of record of the epos in 70's, a vivid typological-toponymical difference is revealed in the second variant of Mokq (the first variant was from Mush), which M. Abeghyan discovered and recorded according to the words of emigrant Uncle Nakho from Mokq, who served in Gevorkian Seminary in Ejmiatsin. This typological-toponymical classification of the heroic epos, indeed, was generalized thanks to the further records.

The honored specialist in the Armenian studies M. Abeghyan names the epos with general folk name “SasnaTsrer”, which expresses the subsequence of generations.

Discovery and recording of stories of Mokq, along with publication, took place in

three stages: 1889-1900's, 30's and 70's, i.e. with interruptions in thirteen, seventeen and thirty-four years. As a result, the number of known stories of typological group of Mokq ("SasnaTsrer" epos) reaches 32.

These stories were published in different years, in various volumes, and then were summarized in the new scientific volumes: "SasnaTsrer", volume 1, 1936, "Sasuntsi David" 1968, "SasnaTsrer" volume 3, 1979.

Almost all storytellers (when clarifying the details of the collection of folk art) claim that they used to know the full version of the heroic epos, but forgot it, or forgot the details told by their master. And it doesn't matter that their information is sometimes brought to the point of exaggeration, as if, for example, their master knew the seven branches of the epic, etc.

Narratives of Mokq are considered holistic-traditional in the studies of epos: they have four branches, and there are also variants with two or three branches. The presence of the first branch "Sanasar and Baghdasar" and song prelude /VoghormikiOghorminer/ is characteristic of stories of Mokq. Some variants of these narratives were once recorded in the native environment, almost all variants are deprived of book influence, some examples were re-recorded. In epos studies the stories of this group were characterized as traditional-classical type of heroic epos, thanks to traditional-narrative characteristics, presence of poetry and prose, as well as song fragments.

Keywords: heroic epos, typological-toponymical, narrative, linguistic-dialectic storyteller, branch, holistic-traditional, song prelude, orally transmitted, recorded original.

АННА ПОГОСЯН - ИСТОРИЯ ЗАПИСИ И ПУБЛИКАЦИИ ПОВЕСТВОВАНИЙ МОКСА ГЕРОИЧЕСКОГО ЭПОСА «САСНА ЦРЕР» - Армянский народный героический эпос «Саснацрер» был обнаружен и записан в течение 19-20 веков. Был записан в Западной Армении, в частности, со слов сказителей живущих в бассейне озера Ван, а также в провинциях к юго-западу и северо-востоку от него: Сасун, Муш, Бахеш, Мокс, Шатах, Ван, Айоц-дзор, Хлат, Арчеш, Маназкерт, Алашкерт, Баязет. Они были малограмотными, благочестивыми крестьянами, которые были насильно выселены из своей родины во время Геноцида армянского народа и нашли пристанище в Восточной Армении (Вагаршапат, Аштарак, Апаран, Талин, Нор Баязет, Веди, Арташат, Ширак, Лори), Парскаайке (Хой, Салмаст и Маку), Тифлисе и пр., став переселенцами. Большая часть сказаний героического эпоса «Саснацрер» была записана именно в их новых поселениях.

Героический эпос был передан устно на вышеперечисленных различных диалектах и субдиалектах, из-за чего последующие записи были объединены в три большие типолого-топонимические группы (Мушскую, Мокскую и Сасунскую).

И хотя данная типолого-топонимическая классификация производится после последнего этапа записи эпоса в 70-е годы, тем не менее во втором, Мокском

варианте (первый вариант был из Муша), который М. Абебян обнаружил и записал со слов эмигранта Дяди Нахо из Мокса, который служил в Геворкянской Семинарии в Эчмиадзине, выявляется типолого-топонимическая очевидная разница. Данная типолого-топонимическая классификация героического эпоса, несомненно, обобщается благодаря дальнейшим записям.

Заслуженный арменовед М. Абебян называет героический эпос общим народным названием «СаснаЦер», которое выражает всю последовательность поколений.

Обнаружение и запись Мокских повествований, наряду с публикацией происходили в три этапа: 1889-1900-е годы, 30-е и 70-е годы, т.е. с перерывами в тринадцать, семнадцать и тридцать четыре года. В результате до сих пор количество известных нам повествований Мокской типологической группы эпоса «СаснаЦер» достигает 32-х.

Эти повествования были опубликованы в разные годы, в различных сборниках, а затем в дальнейшем обобщены в новых научных сборниках: «СаснаЦер» том 1, 1936, «Сасунци Давид» 1968, «Саснацпер» том 3, 1979.

Почти все сказители (при выяснении деталей сбора народного творчества) утверждают, что знали полную версию героического эпоса, однако забыли ее, или же позабыли детали, рассказанные им их мастером. И совсем не важно, что их сведения порой доведены до преувеличений, например, что их мастер знал семь ветвей эпоса и пр.

Мокские повествования в изучении эпоса считаются целостными-традиционными: с четырьмя ветвями, выступают также в вариантах с двумя и тремя ветвями. Для мокских повествований характерно наличие первой ветви «Санасар и Багдасар» и песенной прелюдии /ВохормикиОхорминер/. Некоторые варианты данных сказаний были записаны в свое время в родной среде, почти все варианты лишены книжного воздействия, некоторые образцы были записаны повторно. В исследовании эпоса повествования данной группы были охарактеризованы как традиционно-классический тип героического эпоса, благодаря традиционным повествовательным характеристикам, наличию поэзии и прозы, а также песенными фрагментами.

Ключевые слова: героический эпос, типолого-топографический, эпическое сказание, лингвистико-диалектальный собиратель-издатель, ветвь, целостный-традиционный, песенная прелюдия, переданный в устной форме, записанный оригинал.

Գրականություն

- Աբեդյան Մ. 1966, Երկեր, հատոր Ա, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ:
Աբեդյան Մ. 1939, «Սասունցի Դավիթ» Հայ ժողովրդական եպոս Բիբլիոգրա-

ֆիա, պրակ առաջին (կազմեցին Մ. Բաբայան յեվ Ս. Միքայելյան, ներածությամբ և խմբագրությամբ պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի), Երևան, Պետական Հրատարակչություն:

Աբեղյան Մ. 1906, Հայժողովրդականվեպը, «Ազգագրական հանդես», գիրք XIII, Թիֆլիս, էջ 5-36:

Դավիթ և Միք. ժողովրդական դիցազնական վեպ, գրի առաւ Մ. Աբեղյան, Ծուշի, 1889, էջ Բ-Ժ: Հայ ժողովրդական վեպը, «Ազգագրական հանդես», գիրք XIII, Թիֆլիս, 1906, էջ 5-36:

Գրիգոր Գ. 1953, «Սասնածռեր» Եպոսի երկրորդ հատորի հրատարակության առթիվ, «Տեղեկագիր հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի» (հասարակական գիտություններ), թիվ 4, էջ 2-14:

Գրիգորյան Գ. և Վ. 1977, Նոր պատումներ, հավաքեցին և հրատարակության պատրաստեցին՝ Գրիգորյաններ Գ. և Վ., «Սովետական գրող» հրատ., 366 էջ:

Հարությունյան Ս. 2010, Բանագիտական ակնարկներ, «Գիտություն», հրատ., Երևան, 263 էջ:

Համբարձումյան Հ. 2018, Պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, ԵՊՀ հրատ., Երևան, 318 էջ:

Սահակյան Ա. 1975, «Սասնա ծռեր» պատումների քննական համեմատություն, Երևան, 189 էջ:

«Սասնա ծռեր» 1892, «Սասունցի Դավիթ». ժողովրդական վեպի երկու նոր վահաններ (Աբարանի և Մոկաց բարբառներով), գրի առավ Գարեգին սարկավազը, Թիֆլիս, «Շարամաճե» տպարան, 208 էջ:

«Սասնա ծռեր» 1902, (գրի առաւ Ա. Աբեղյան), «Ազգագրական հանդես», գիրք IX, Թիֆլիս, էջ 117-143

«Սասնա ծռեր» 1936, հատ. Ա, (խմբ. Մ. Աբեղյանի և աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, Պետական հրատ., 1128 էջ:

«Սասնա ծռեր» 1944, հատ. Բ, մաս Ա (խմբ. Ակադեմիկոս Մ.Աբեղյանի և աշխ. պրոֆ. Կ.Մելիք-Օհանջանյանի), Երևան, Պետական հրատ., 405 էջ:

«Սասնա ծռեր» 1951, հատ. Բ, մաս Բ (խմբ. Ակադեմիկոս Մ.Աբեղյանի և աշխ. պրոֆ. Կ.Մելիք-Օհանջանյանի), Երևան, Պետական հրատ., 1005 էջ:

«Սասնա ծռեր» 1979, հատ. Գ գրառ. ու հրատ.՝ Ս. Հարությունյան և Ա. Սահակյանը, Երևան, 583 էջ:

«Սասնա ծռեր» 1999, հատ. գրառ. ու հրատ.՝ Ս. Հարությունյան և Ա. Սահակյանը, Երևան, 582 էջ:

«Սասունցի Դավիթ» 1961, Հայկական ժողովրդական Եպոս (համահավաք բնագիր) Երևան, «Հայպետհրատ», 334 էջ:

DOI: 10.54503/1829-0116-2022.1-168